

Մասնաւոր վարպետներ կը հաւասարակշռէին հոսանքի աստիճանը, ջրամբարը, անիւի տրամագիծը ու դարձող քարը :

Ջուրը շարժման մէջ կը դնէր վրայի քարը, որու արագութեան համաձայն չախաչախի թրթռացումէն վար կը հոսէր հացահատիկը ու կը փոշիանար դարձող քարին տակ :

Չափազանց արագ դարձող ջաղացքի ալիւրը աստիճանաբար հաստ կ'ըլլար :

Կարելի էր քարը բարձրացնել կամ ցածցնել, յաճախորդին համեմատ :

Կռանը վերէն տալ արագ ու անպատասխանատու դործ տեսնելու հոմանիշ էր :

Համայնքի պէտքերուն ծառայող Սէթէնի, փուռի, երկանաղացքի ու այլ հաստատութեանց նման ջաղացքի պաշտօնեան ալ թէ դրամով եւ թէ որոշ չափով կ'օգտուէր աղօնէն : Ծանչցուած էր նաեւ իրաւունքը ջաղացականի աշկերտին, որ կը մաքրէր ալիւրի ընդունարանը ու կ'օգնէր աշխատանքին :

Ժողովրդական բառով աշկերտը կը կոչուէր Թօզնի եւ ալիւրով կը ստանար իր հալսը :

Թ Ա Ղ Ա Յ Ի Ն Փ Ո Ի Ռ Ե Ր

Ոստելով Էվէրէկ-Ֆէնէսէի հայոց դէպի նոր ասպարէզներ ուտում ընելու նախանձախնդրութեան մասին՝ Ա. Ալպօյաճեան (ՀԱՅ ԿԵՍՍՐԻԱ, էջ 1591), կը գրէ .—

« Այս դիւղաքաղաքը հետզհետէ կը թօթափէր նահապետական կենցաղի պարզութիւնը եւ սակաւապետութիւնը : Նոր պահանջներ նոր շահերու հետամուտ ըրին տեղացիները եւ երեւոյթները այնպէս ցոյց կուտային որ կարճ ժամանակէն Էվէրէկ-Ֆէնէսէ պիտի դառնար ճարտարարուեստական քաղաք մը :

« Հաճի Կարապետ Կէրէքմէղեան (1820-1877) բնիկ Էվէրէկցի էր եւ հազիւ նախնական կրթութիւն մը ստացած իր ծննդավայրին մէջ, Էվէրէկի նորութիւններ բերող անձ մը եղած է :

« Այս անձը որ Կ. Պոլսոյ եւ Էվէրէկի միջեւ վաճառականութեամբ եւ փոլիցաֆիլութեամբ կը զբաղէր եւ այս պատճառաւ Կ. Պոլիս երթելէկամ էր ինքն է որ քարիւղի լամպան Կ. Պոլիսէն Էվէրէկ բերած էր :

« Նոյնպէս ինքը Կ. Պոլսոյ եւ մեծ քաղաքներու մէջ հասարա-